*քերուն վրայօք։ Ու քաղաքն, որուն հիմը դրաւ, եւ ոչ ան շնորհմունքն ունեցաւ, որ իր նշխարհները կարենայ իր ծոցն ընդունելու։ Վիէննա, իր վախճանած տեղը թաղուեցաւ։*

*Իր մահուանը նախընթաց պատահարներուն եւ պարագայից վրայ ամենեւին տեղեկութիւն չունինք։ "Դակիայի ժողովրդոց սկիզբն ու յառաջադիմութիւնը" գրոյն մատենագիրն, այնչափս կը յիշէ, որ Վիէննա, երբ իր ժողովրդեան համար արտօնութիւններ կը հոգար, ընդ կասկածանօք թունաւորութեան վախճանեցաւ։ Իսկ Ստեփ. Ռօշքա, որ Աւքսենտիոսի ժամանակակից ու ընկեր էր, եւ անոր գործքերն իր աչքերը բոլորովին ծանօթ էին, իւր՝ շատ խնամքով ժողոված ժամանակագրութեան մէջ զասոնք կ'ըսէ. 1715. Օգոստոս Վրծրէսգուլ եպիսկոպոսն Ալատինոյ, առաջնորդն հայոց Տրանսիլվանիոյ, մարտի 10 վճարէ զկեանս իւր, ոչ առանց կասկածանօք թունից ... ի հունգաբացւոց ի Վիէննա. ուր իբր զամս երիս յամեցեալ վասն ընդունելոյ զբրիվիլէկս ի կայսերէն հաստատելոյ զազատութիւն Նորաշէն քաղաքին Սամօշույվար (Կերլայ), որ այժմ՝ Հայաքաղաք կոչի։"*

*Հայաքաղաքին ազգային մայր եկեղեցւոյն մէջ կեցած է իր կտակին մէկ ընդօրինակութիւնը, զոր 1715 մարտ 4ին գրած է։ Ասոր մէջ՝ իր ստացուածոցը վրայօք մանրամասն կարգադրութիւններ կ'ընէ ու կը սահմանէ, որ Կէօրկէնի ջաղացքն ու կալուածը ծախուի եւ անկէ եկած գումարէն ամէն մէկ քահանայի հարիւրական ֆիորին տրուի։ — Մասնաւորաց թողուցած գումարէն մնացած ստակը չորս հաւասար մաս բաժնուի եւ կենդանի եղբօրն Ստեփանի ու երեք մեռնող եղբարցն որբերուն տրուի։ Կը խնդրէ միանգամայն կտակին մէջ հպատակներն. որ այն պարտքերն, զորոնք իրենց գործքը յառաջ տանելու համար, Վիէննա՝ երեք տարուան մէջ ըրած է, հաւասարցընեն։ — Ասկից զատ, ինչպէս ուրիշ տեղ ալ յիշած ենք, իրեն յաջորդ կը թողու զՍտեփ. Ռօշքա։ "Առաջի Աստուծոյ կը յանձնեմ Ձեզի, կ'ըսէ, որ ամէնքնիդ ժողովիք եւ խնդրէք հաւատոյ տարածման ժողովքէն, որ ձեզի եպիսկոպոս ու փոխանորդ անուանէ զՎ. Տ. Ստեփանոս Ռօշքա։ Աս մարդն ու իր գերդաստանը լաւ կը ճանչնաք. այնպէս որ եթէ զձեզ զրկեն Ստեփ. Վարդապետէն, չէք կրնար ուրիշ մը գտնել, որ ձեզի արժանաւոր հովիւ ըլլայ։ Եթէ — այսպէս կը շարունակուի կտակը — Ստեփ. Վարդապետ կ'ըլլայ իմ յաջորդս, իրեն կը թողում երկու խաչ. մէկը՝ զոր վրաս կը կրեմ, առանց ակն պատուականի, մէկալը՝ քարերով զարդարուած ... ու երկու մատանի։" Վերջապէս կ'օրհնէ իւր ժողովուրդն ու կը յայտնէ թէ, առաջի Աստուծոյ, ողջ միօք, հաստատուն հաւատքով, ամուր յուսով եւ ճշմարիտ սիրով՝ ըստ մասին ինք, ըստ մասին — իւր անձին տկարութեանը համար, բայց իւր կամացը համեմատ — Թէոդորոս Պուզէսգուլ քահանան գրեց իր վերջին կամքը, զոր իւր սեպհական կնքովը կնքած ու յատուկ ձեռամբն ստորագրած է։*

*Թէ ուր տեղ թաղուած է եւ թէ ուր կը հանգչին իր մարմնոյն մնացորդները, չենք գիտեր։ Ասոր վրայօք յիշատակութիւն միայն Լուքաչի կ'ընէ, երբ կ'ըսէ թէ, զինք, Վիէննայի ողորմած եղբարց եկեղեցին թաղած են։[1] — Սակայն առաջիկայ տողերը գրողն անձամբ գացած, ետեւէն ինկած ու քննած է ասոր ստուգութիւնը, բայց առանց արդիւնքի։ Վասն զի յիշեալ տարիներն այս տեղ մեռած ու թաղուածներուն մէջ Վրզարեանին անունը գտած չէ։ Հո՛ն՝ ասանկ մեծ մարդու մը վախճանելուն ու թաղուելուն հետքերն ամենեւին չկան. ուր որ կրնար եւ պէտք էր, եթէ կրօնին տարեգիրներուն մէջ ու եկեղեցւոյ որմերուն վրայ՝ ոչ, գոնէ անոր ստորերկրեայ գամբաններուն մէջ բան մը գտնուիլ։*

*Եգոյ հագուստ զգեցած Տրանսիլուանիոյ ազգայիններն՝ որոնք, յանձին Վրզարեանի չէ թէ միայն հովուապետնին, այլ նաեւ խորհրդատունին ու ամէն գործքերնուն յառաջապահն ու պաշտպանը կորսնցուցին ... փնտռեցին, բայց չգտան յաջորդ՝ որ նմանօրինակ զօրութեամբ ու հեղինակութեամբ անոր սկսած փրկական գործքը շարունակէ։*

ՅՈՎՀ. ԱՆԾՅԻ

# ԳՐԱԿԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ 1893 ՏԱՐՒՈՅ

*Յաջորդ ցուցակս ալ այնպէս կազմուած է՝ ինչպէս նախընթաց տարիներու ցուցակները։ Լիակատար ընել թէեւ ջանացած ենք, բայց այժմու հանգամանաց մէջ գրեթէ անհնար եղած է ասոր հասնիլ։ Վասն զի գրոց միայն մի*

[1] Sepultus est Viennae, in suburbio Leopoldino, in templo F. F. S. Joannis de Deo a Misericordia nuncupatorum. Hist. Armenorum. էջ 72.

digitised by A.R.A.R.@

մասն անձամբ տեսնելով ցուցակագրուած է, մնացեալը քաղուած է ազգային օրաթերթներէ, ուր շատ անգամ թերի տեղեկութիւնք միայն կը գտնուին նշանակուած։ Բազմաթիւ գրութիւնք ալ ընդհանրապէս խմբագրութեանց չեն խաւրուիր, որով չեն ծանօթանար ցուցակագրել ուղղելն։ Այս տարի Կ. Պոլսոյ գրութիւնք համեմատաբար աւելի լիակատար են, որչափ կը յուսանք. վասն զի գեղեցիկ խորհուրդ մը յղացած է Վ. Գ. Զարդարեան ծանօթ Գրատունն ամսական ցուցակներ հրատարակելու նորագոյն հրատարակութեանց համար, (տես Գրացուցակ Նոր հրատարակութեանց, կազմեց Վահան Գ. Զարդարեան. Կ. Պ. 1893, Յուլիս—Դեկտ. 1894 Յունուար եւն։) Նոր-հրատարակութեանց ամսական ցուցակ մ՚ալ սկսած էր հրատարակուիլ Արշալոյս թերթին մէջ (1893, Թիւ 1, էջ 30 եւն։), բայց դժբախտաբար չշարունակուեցաւ։ — Ցուցակիս մէջ կան քանի մը գործք որ 1892ին լոյս տեսած են, բայց 1893 տարեթիւը կրելով՝ առնուած են ցուցակիս մէջ, մինչ 1893 տարւոյ վերջերը լոյս տեսնող բայց 1894 տարեթիւ կրող գրութիւնք՝ քանի մը բացառութեամբք՝ թողուած են յաջորդ ցուցակին։ Ուր Տարեթիւ չենք դներ, ամէն տեղ 1893 տարին պէտք է հասկընալ։ Նոյնպէս է քննադատութեանց մէջ։ Վերջնոցս մէջ ջանացած ենք ընտրութիւն մ՚ընել. որով դուրս մնացած են համառօտ ծանուցմունք, գովաբանական յայտարարութիւնք եւ նմաններ։ Նաեւ գրքի մը նկատմամբ երկար վիճաբանութիւնքն մանրամասն նշանակել աւելորդ էր կարծենք։ Այն ամէն գործք որ 1892—93 տարեաց մէջ լոյս տեսնելով՝ արդէն դրուած են նախընթաց ցուցակին մէջ, (տես Հանդէս Ամս. 1893, Թ. 10, էջ 301—303. Թ. 11, էջ 344—45 եւ Թ. 12, էջ 366—369.) չեն կրկնուած հոս, ինչպէս ինքնին կը հասկցուի։ Տարակուսական կէտերը հարցական նշանով որոշած ենք։

---

## Ա. ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1. Ա. Ա. — Մեծը, արեւելեան աւանդութիւն։ Շուշի, տպ. Հայոց Հոգ. Վարչ.։ Գինն է՝ 5 կ.։

2. Աբիկեան Մ. — Զրուցատրութիւն արաբերէն լեզուի։ Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 4 ղշ.։

3. — — Գործնական Բառարան Տաճկերէն-Հայերէն։ Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ.։ 8° 350 էջ. 6 ղշ.։
[Քննդտ. — “Մասիս„ Թ. 3984։]

4. Ալիշեան Հ. Ղեւոնդ Վ. — Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհին։ Վենետ. տպ. Ս. Ղազ.։ 1° Թ եւ 563 էջ. 1 քարտէս, 152 զինկատիպ, 7 գունատիպ եւ բազմաթիւ ճշգրտապատկերք։ Գինն է՝ 75 Ֆր.։

5. Աղաւնեան Գ. քհ. — Դիւան Հայոց Պատմութեան։ Գիրք Ա եւ Բ. (1780—1834) պատկերով։ Տփ. տպ. Շարաձէ։ 4° 322 էջ. 2 րբլ.։

6. — — Ժողի օրացոյց 1894 թուի։ Տփ. տպ. Յ. Մարտ. 20 կ.։

7. — — Հատուածական (Պատի) Օրացոյց 1894 թուի։ Զ Տարի։ Տփ. տպ. Շարաձէ. 60 կ.։

8. Աղբիւր, միամսեայ պատկերազարդ հանդէս երախաների եւ պատանիների համար։ ԺԱ Տարի։ Տփ. տպ. Արօր։ Խմբ. Տ. Նազարեանց. 3 րբլ.։

9. Աճէմեան Թ. — Նոր քերականութիւն հայերէն աշխարհաբար լեզուի։ Ա Տարի։ Կ.Պ. տպ. Եազըճեան։ 8° 145 էջ. 3 ղշ.։
[Քննդտ. — “Հայրենիք„ Թ. 545, 546. “Արեւելք„ Թ. 2864։]

10. Այվազեան Յ. Ա. — Շար հայ. կենսագրութեանց։ Հտր. Ա։ Կ.Պ. տպ. Գ. Պաղտ.։ 8° 143 էջ. 6 ղշ.։

11. — — Նոյն։ Հտր. Բ։ Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 144 էջ. 6 ղշ.։

12. — — Նոյն։ Հտր. Գ. Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 224 էջ. 8 ղշ.։
[Քննդտ. — “Արեւելք„ Թ. 2746. “Ճ. Շարգիյէ„ Թ. 2358։]

13. — Բազարատ. — Աշոտ երկաթ, պատմական վէպ։ Մասն Ա։ (“Արձագանք„ թերթէ։) Տփ. 8° 200 էջ. 75 կ.։

14. — Եղիշէ Ծ. Վ. — Ուսումն քարոզականի։ Կ.Պ. գրատ. Պալենց. 5 ղշ.։

15. Աշըղ-Ջիւանոյ Երգերը։ Գ Տպ.։ Աղեքսանդրոպոլ, տպ. Սանոյեանց։ 1 րբլ. 20 կ.։

16. Ապրիլեան Կ. — Հայրենիքից դուրս, վէպիկ։ Հրատ. Մ. Թարվերտեան։ Տփ. տպ. Յ. Մարտ. 12° 45 էջ. 15 կ.։
[Քննդտ. — “Տարազ„ Թ. 22։ “Արարատ„ Թ. 6։]

17. Առաջնորդ զրուցատրութեան անգղիերէն լեզուի համդերձ արտասանութեամբ եւ հայ բացատրութեամբ։ Կ.Պ. 80 էջ. 5 ղշ.։

18. Առաքելեան Հ. — Հայրիկի կաթուղիկոսական ընտրութիւնը։ Տփ. 20 կ.։
[Քննդտ. — “Տարազ„ Թ. 33։]

19. Ատրպետեան Ս. — Սարրաֆ, ողբերգութիւն հինգ արարուածով։ Տփ. 30 կ.։

20. — — Շուշան, ողբերգութիւն երեք արարուածով, Թրքահայոց կեանքից։ Պետր. 112 էջ. 1 րբլ.։
[Քննդտ. — “Մուրճ„ Թ. 4։]

21. Արապաջեան Յ. — Հարսնացու, Սերբերի կեանքից, թարգմանութիւն։ Աղեքսանդրոպոլ, տպ. Սանոյեան. 8° 83 էջ. 15 կ.։

22. Արամեան Մ. — Գործնական քարոզագիտութիւն։ Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 12° 64 էջ. 2½ ղշ.։

23. Արարատ, կրօնական, բանասիրական եւն ամսաթերթ։ ԻԶ Տարի։ Վաղարշապատ, տպ. Էջմ. 4 րբլ.։

24. — Ամսօրեայ. (Բ Տարի.) Հրտ. Փ. Մ. Այվատ։ Նիւ-Եորք. 15 Ֆր.։

25. Արաքս, գրական եւ գեղարուեստական պատկերազարդ հանդէս։ Ե Տարի։ Պետր. 8° Երես՝ ԺԴ+204+19+(վէպ)49—72+3։ 31 նկարք։

26. Արեւելեան Մամուլ, հանդէս գրական եւ քաղաքական։ ԻԱ Տարի։ Զմիւռնիա, տպ. Մամուրեան. 3½ մէճիտ։

27. Արեւելք, օրագիր քաղաքական եւն։ Ժ Տարի։ Կ.Պ. տպ. “Արեւելքի„ 150 ղշ.։

28. Արթինեան Յ. — Առաջին տարերք բնական եւ բնապատմական գիտութեանց։ Մասն Ա. Մարդ եւ կենդանիք, հետեւողութեամբ Պոնիէի։ Կ.Պ. տպ. Յ. Մատթ. 8° Թ եւ 107 էջ. 4 ղշ.։

digitised by A.R.A.R.@

29. Արիստակիսի Լաստիվերտացւոյ վրդ. Հայոց Պատմութիւն, — թարգմանեց աշխարհաբար Մինաս քհ. Տէր-Պետրոսեանց: Աղեքսանդրոպոլ, տպ. Ա. Մ. Մալխասեան: 8° 233 էջ. 60 կ.:

[Քննդտ. — “Մուրճ„ Թ. 3: “Նոր-Դար„ 1894, Թ. 141:]

30. Արօր — Պատկերազարդ օրացոյց 1894 թուի: Բաքու, տպ. Արօր: Մեծ 8° Երես՝ 28+94+24, եւ 19 պատկեր. 1 րբ.:

31. — — Համառօտ օրացոյց 1894 թուի: Բաքու, տպ. Արօր. 10 կ.:

32. Աւետաբեր, շաբաթաթերթ կրօնական, ուսումնական, ընտանեկան եւ քաղաքական: ԽՋ Տարի: Կ.Պ. տպ. Պօյաճեան: Խմբ. Հ. Ս. Պարնըմ. 1½ մէճիտ: — Նոյնը՝ նաեւ հայատառ տաճկերէն:

33. — Մանկանց, պատկերազարդ ամսաթերթ: ԻԲ Տարի: Կ.Պ. տպ. Պօյաճեան. 6 ղշ.: — Նոյնը՝ հայատառ տաճկերէն:

34. Բաքարեան Կ. — Արուեստ նկարչութեան ուսանելի 10 օրէն, հրտ. Յ. Գ. Փալազաշեան: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° 29 էջ. 2 ղշ.:

35. Բաքաքեխոլեան Ն. — Պառաւ Տոնկա, Վէպ, թրգմ. ռուսերէնից: Մոսկ. տպ. Բարխուդարեան. 3 կ.:

[Քննդտ. — “Նոր-Դար„ Թ. 189:]

36. Բազմավէպ Հանդիսարան, ամսաթերթ բանասիրական եւ ուսումնական: ԾԱ Տարի: Վենետ. տպ. Ս. Ղազ. 10 Ֆր.:

37. Բալաղեան Ս. — Զրոյցներ հողի մասին Տփ. տպ. Վրաց Ընկ. 15 կ. (Հրտ. Ընկ. Տփղիսի:)

38. — — եւ Քալանթար Ս. — Պաստէօր, պատկերով: Տփ. տպ. Վրաց. Ընկ. 20 կ. (Տփ. Հրտ. Ընկ.:)

39. Բաղդասարեան Խր. — Ատրիէն, վիպերգութիւն, թարգմանուած: Կ.Պ. տպ. Եազըճեան: 8° 167 էջ. 10 ղշ.:

40. Բարեկենդանի անկուտները, կատակերգութիւն մէկ արարուածով, թրգմ. իտալերէնէ. հրտ. Տ. Գ. Փափազեան: Կ.Պ. տպ. Ասատուրեան 8° 20 էջ. 60 փարայ:

41. Բարխուդարեան Մակար Ծ. Վ. — Աղուանից երկիրը եւ Դրացիք: Տփ. տպ. Շարաձէ:

[Քննդտ. — “Մուրճ„ Թ. 3: “Արձագանք„ Թ. 27: “Տարազ„ Թ. 21:]

42. Բէհբուդեան Կ. — Ծուխ: Տփ. տպ. Յ. Մարտ. 5 կ.:

43. Բիւզանդիոն, լրագիր գիտական, քաղաքական եւ ազգային: ԾԱ—ԾԲ Տարի: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ.: Խմբ. Ս. Խ. Իւթիւճեան. 25 ղշ.:

44. Գաքամաճեան Ս. — Առձեռն նամականի: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° ԺՋ եւ 272 էջ. 7 ղշ.:

[Քննդտ. — “Հայրենիք„ Թ. 531 եւ 590: “Արեւելք„ Թ. 2854:]

45. Գաքրիէլեան Մ. — Նմոյշ Օսմանեան Գրագիտութեան: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 12° 90 էջ. 4 ղշ.:

46. — Ս. — Առեւտրախօսութիւնք: Նիւ-Եորք, տպ. Գաքր. 12° 71 էջ. 1 Ֆր.:

47. Գալէմքեարեան Հ. Գ. Վ. — Պատմութիւն Հայ Լրագրութեան: Հտր. Ա. ի սկզբանէ մինչեւ 1860: Վիեննա, տպ. Մխիթ. 8° 232 էջ, 1 ճշգրտապատկեր: Գինն է՝ Ֆր. 2.50. (Ազգ. Մատ. Թ:)

[Քննդտ. — “Հայրենիք„ Թ. 507: “Արեւելք„ Թ. 2826: “Նոր-Դար„ Թ. 117: “Մասիս„ Թ. 400: “Ճ. Շարգիյէ„ Թ. 2464: “Մէճմուայը Ախպար„ Թ. 2722: Ara, 1893 Թ. 9, 10. Vetter ի թերթին Literarische Rundschau 1894, Nr. 3, p. 95:

48. — — Աղօթք Ս. Պատարագի “Որ օրհնես զայնոսիկ„ ի յիսուն լեզուս սեպհական տառիւք իւրաքանչիւր լեզուի: Վիեննա, տպ. Մխիթ. 4° 106 էջ. Ֆր. 7.25:

[Քննդտ. — “Արարատ„ Թ. 5: — Տես եւ ի շարս Եւրոպ. Հրատարակութեանց:]

49. Գանձակոռ Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ հաշիւ վասն 1891 եւ 1892 տարեաց. Գանձակ:

[Քննդտ. — “Արարատ„ Թ. 6:]

50. Գարագաշեան Ա. Մ. — Խորէն կամ ընթերցարան: Ա: Ը Տպ. Կ.Պ. տպ. Մ. Փափազեան. 6 ղշ.:

51. — — Գործնական քերականութիւն հայերէն լեզուի: Ժ Տպ.: Կ.Պ. տպ. Փափազեան. 8° 295 էջ. 6 ղշ.:

52. Գարեգին սարկաւագ — Փշրանք ժողովրդական բանաստեղծութեանց: Ազգագրական Ժողովածու Գ: Տփ. տպ. Շարաձէ. 8° 139 էջ. 50 կ. (Հրտ. Ընկ.:)

53. Գարիէր Ա. — Նորագոյն աղբերք Մ. Խորենացւոյ, քննադատական ուսումնասիրութիւն. Թրգմ. Հ. Յ. Տ: Վիեննա, տպ. Մխիթ. 8° Ծ եւ 51 էջ. Ֆր. 1. (Ազգ. Մատ. Ը.)

[Քննդտ. — “Մուրճ„ 1892 Թ. 12. 1893 Թ. 5: Բազմավէպ Թ. 7, հմմտ. նաեւ Սարգսեան Հ. Բ. Վ. “Տեսութիւն„ եւն, եւ ի շարս Եւրոպ. Հրատարակութեանց:]

54. Գլէնքէ Հերման — Կինն իբրեւ ամուսին. Ֆիզիքական եւ բարոյական առողջաքանութիւն ամուսնութեան, Թրգմ. գերմաներէնէ Մ. Կ. Նազիկեան: Կ. Պ. տպ. Յ. Մատթ. 8° ԻԳ եւ 430 էջ: 12½ ղշ.:

[Քննդտ. — “Հանդէս Ամս:„ 1894 Թ. 2: “Հայրենիք„ Թ. 603: “Արեւելք„ Թ. 2917: “Արեւ. Մամուլ„ Թ. 12: “Ճ. Շարգ.„ Թ. 2575:]

55. Գովրիկեան Հ. Գ. Վ. — Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ. այս գաղթականութեան պատմութիւնը քաղուած՝ Դրանսիլուանիոյ իշխանաց եւ Աւստրիոյ կայսերաց առանձնաշնորհութեանց կոնդակներէ, ժամանակակից արձանագրութիւններէ եւն. 1680—1779: Վիեննա, տպ. Մխիթ. 8° երես Ծ եւ 533. Ֆր. 4.50. (Ազգ. Մատ. ԾԱ:)

56. Գուլամիրեանց Ս. — Արաքսի ալբոմը, 90 պատկեր. Պետրբ. 5 րբ.:

57. Գուրգէն Յ. — Պատկեր աշխարհիկ գրականութեան արեւմտեան Հայոց ի վերջ կոյս ԺԹ դարու: Հտր. Բ: Տետր Ա: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° էջ 1—64. 100 փարայ:

58. — — Նոյն Տետր Բ եւ Գ: Կ.Պ. տպ. Պաղտ. էջ 65—128 եւ 129—192: (Երկու հատոր ի միասին՝ 15 ղշ.:)

59. Գրիգորեան Լ. — Չար սատանայ, կեանքի գործեր, հրտ. Ղ. Կարապետեան: Տփ. տպ. Մելիք-Շահնազար. 15 կ.:

60. — — Վայ կորչողին, վէպիկ. հրտ. Գ. Տէր-Խաչատրեան: Տփ. տպ. Յ. Մարտ. 5 կ.:

61. — Կ. — Երկու Որբեր: Զմիւռնիա, տպ. Տէտէեան. 7 ղշ.:

62. — Ռ. — Քերականութիւն արաբերէն լեզուի: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ.: Մեծ 8° 180 էջ. 15 ղշ.:

[Քննդտ. — “Արեւելք„ Թ. 2933 եւ 2935: “Ճ. Շարգ.„ 1894 Թ. 2602, 2622 եւն:]

63. Գրիգորեանց Ջ. — Ջուր: Տարրական նախագիտելիք բնական գիտութեան Թիւ 1: Տփ. տպ. Մելիք-Շահնազարեան. 11 պատկեր:

64. Դաւթեան Ս. — Բանալի շարադրութեան: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 96 էջ. 4 ղշ.:

digitised by A.R.A.R.@

65. — — Ընդելարան հայ լեզուի, պատկերազարդ ընթերցարան: Գիրք Ա: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 64 էջ. 2½ ղշ.:

66. — — Վարժութիւն մանկանց: Ա Մասն: Դ Տպ.: Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամ. 8° 112 էջ. 7½ ղշ.:

67. — — Նոյն: Գ եւ վերջին Մասն: Գ Տպագ. Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 8° 200 էջ. 6 ղշ.:

68. — — Փնջակ պատկերազարդ: Բ Տպագր.: Կ.Պ.:

69. Դէօյիննէր — Նամակներ եւ Յայտարարութիւններ, Թարգմանութիւն: ("Արարատ" Թերթէ:) Վաղարշապատ, տպ. Էջմ. 50 կ.:

70. Դիմաքսեան Յ. Յ. — Ձմեռուան աղջիկը, Թարգմանութիւն: Կ.Պ.:

71. Դոռբեան Պ. — Տաղք եւ Թատերգութիւնք, Նամականի, ղամբանականք, տապանագիրք, հրտ. Բարսեղ Ե. Էքսէրճեան: Կ.Պ. 8° 359 էջ. 15 ղշ.:

72. — Եղիշէ Ծ. Վ. — Ընթացք ի գրոց բարբառ: Հտր. Ա. Մասն Ա—Բ: Դ Տպագր.: Կ.Պ. 8° 144 էջ. 5 ղշ.:

73. — — Բառագիտութիւն կամ ութ մասունք բանի: Կ.Պ. 2½ ղշ.:

74. Դպրոցեան գիրք նոր խազերով: Նոր տպագր.: Էջմ. (ˆ):

75. Դրումմոնդ Հէնրի — Ամենալաւ բանը աշխարհում, Թրգմ. Կարապետ սրկ. Տէր-Մկրտչեան: Տփ. 20 կ.:

76. Եսայեան Է. — Մեծածորի ներշնչմունք, Օրագրութիւնք Էմմայի (1891—2): Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° Ը եւ 119 էջ. 7 ղշ.:

[քնն. "Հայրենիք" Թ. 536, 542, 586:]

77. Եռասնեան Պ. — Մանուշակներ: Կ.Պ.:

[քնն. — "Հայրենիք" Թ. 476:]

78. Երզնկեանց Գրիգորիս — Դաստիարակման խորհուրդներ: ("Արարատ" Թերթէն:) Վաղարշապատ, տպ. Էջմ. 30 կ.:

79. Ե. Հ. — Քննական հայեացք, Շիրվանզադէի "Արսէն Դիմաքսեան" վէպի մասին: Տփ. տպ. Մ. Վարդ. 8° էջ 45. 20 կ.:

[քնն. — "Տարազ" 1894, Թ. 3:]

80. Զ. Ա. Ս. — Նուագք Եւտերպեայ: Ա. Զարթօնք: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 12° 80 էջ. 5 ղշ.:

81. Զարդարեան Վ. Գ. — Գրացուցակ նոր հրատարակութեանց. (ամէն ամիս մէկ թիւ:) Ա Տարի 1893 Յուլիս—Դեկտ.: Կ.Պ. տպ. Ճիվէլէկ, յետոյ Գ. Պաղտ. եւ Տամատեան: 8° 48 էջ. 10 ղշ.:

[քնն. — "Հայրենիք" Թ. 575: "Արեւ. Մամուլ" Թ. 8 եւ 1894 Թ. 4: "Արեւելք" Թ. 3303: "Ճ. Տարգ." Թ. 2622:]

82. — — Քոլերայի համար առտնին զգուշութիւններ նշանաւոր բժիշկներու գործերէն քաղուած, հայ-տճկ.-յոյն-գաղղ.: Կ.Պ. 4 էջ. ձրի:

83. Զաքարեանց Աղ. — Շիրվանի կոյսը, ժողովրդական աւանդութիւն. ("Արձագանք" Թերթէ:) Տփ. տպ. Շարաձէ, հրտ. Գր. Փարսադանեանց. 5 կ.:

84. Զոհրաբեան Գ. — Պատիւ, կոմեդիա չորս գործողութեամբ. Թրգմ. Ա. Թախմանեան. Տփ. տպ. Մելիք-Շահնազարեան. 8° 145 էջ. 60 կ.:

85. Էբերս Գէորգ — Փարաւոնի աղջիկը. պատմական վէպ. փոխադրութիւն Օ. Շապիրոց. Թրգմ. Գր. Շահրուղալեանց: Տփ. տպ. Շարաձէ. 8° 339 էջ. 80 կ. (Հրտ. Ընկ.:)

[քնն. — "Արձագանք" Թ. 127:]

86. Էքսէրճեան Բ. — Դուրեանի ընդարձակ կենսագրութիւնը: Յետը Ա: Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան 8° 144 էջ. 10 ղշ.:

[քնն. — "Արեւելք" Թ. 2917 եւ (1893) Թ. 3037: "Ճ. Տարգ." 1894 Թ. 2664:]

87. — — Տարերք աշխարհիկ լեզուի: Հտր. Ա: Դ Տպ.: Կ.Պ. 3 ղշ.:

88. Թահտաճեան Խ. Մ. — Համառօտ գեղագրութիւն հայերէն եւ գաղղիերէն: Կ.Պ. (Լիօֆիլր.) 12 տախտակ. 2 ղշ.:

89. Թաղիադեանց Դաւթեան Մեսրոպ — Եղերերգութիւն յորհաս Թանկայ Թաղիադեանց, հրտ. Յովհ. քհ. Մկրեան, ծախիւք Պր. Յովհ. Շահնազար Սարգսեանի: Տփ. տպ. Շարաձէ: 12° Երես 125. (էջ 85—123 Թուղթք Թաղիադեանց, նախ տպ. ի Կալկաթա 1847:)

90. Թատրոն, գրական եւ Թատերգական հանդէս: Ա Տարի: Գիրք Ա: Հրտ. Աղեքսանդր Թարխանեան: Տփ. տպ. Յ. Մարտ, 4° 180 էջ (պատկերազարդ.) 2 րբ.:

[քնն. — "Մուրճ" 1894, Թ. 2:]

91. Թէյեան Ե. — Ընդարձակ իրագիտութիւն: Գ Տպ. սրբագրեալ: Կ.Պ. տպ. Յ. Մ. Փափազեան. 8° 255 էջ. 5 ղշ.:

92. Թէրզեան Դ. Նոր այբբենարան պատկերազարդ Ֆրանսերէն լեզուի: Կ.Պ. տպ. Եազըճեան. 8° 76 էջ. 1½ ղշ.:

93. Թոռնեան Հ. Թ. Վ. — Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց համառօտ ծանօթութեամբք: Մասն Բ: Վիեննա, տպ. Մխիթ. (Ա եւ Բ ի միասին) 8° 468 էջ, 4 Ֆր.:

94. Թորգոմեան Տք. Վ. Յ. — Բժիշկ Տոքթ. Սերվիչէն էֆէնտի: Վիեննա, տպ. Մխիթ. 8° 26 էջ. 1 պատկեր. Ֆր. 1.50:

[քնն. — "Արեւելեան Մամուլ" 1894 Թ. 3:]

95. Թումանեան Ա. — Շամքաղ, գրոց ծաղիկների կեանքից: Տփ. 15 կ.:

96. — Յովհ. — Դաշնակներ: Տփ. 5 կ.:

97. Ժամագիրք Հայ. եկեղեցւոյ: Բ Տպ.: Կ.Պ. տպ. Փափազեան. 8° 632 էջ. 16 ղշ.:

98. Լանիշէ — Երրորդ ոսկի, առակ. Թրգմ. Գիւտ քհ. Աղանեանց: Բ Տպ.: Տփ. 10 կ.:

99. Լէօ — Ախտահանութիւն, վէպ: Բաքու, տպ. Արօր. 8° 175 էջ. 40 կ.:

[քնն. — "Մուրճ" Թ. 9:]

100. Լոռենցեվիչ Վ. — Համբարձմատղէնի Բնախօսութիւն, Թրգմ. Կ. Գիւլնազարեան: Տփ. տպ. Ռոտ. 8° 362 էջ, 13 նկար. 1 րբ. (Հրտ. Ընկ.:)

[քնն. — "Մուրճ" 1894 Թ. 1 եւ 5:]

101. Լոտի Պիէր — Ուղեւորութիւն Ճապոնայում, Թրգմ. Ն. Տէր-Աւետիքեան: Տփ. տպ. Շարաձէ. 10 կ.:

102. Խաչատրեան Գ. — Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն: Վիեննա, տպ. Մխիթ. 8° Զ եւ 78 էջ. Ֆր. 1. (Ազգ. Մատ. ԺԲ:)

[քնն. — "Արձագանք" Թ. 151:]

103. Խաչիկեան Դ. Յ. — Դասագիրք Պատմութեան:

[քնն. — "Ծաղիկ" 1894 (Նոր Շրջան) Թ. 3: "Հայրենիք" 1894 Թ. 823:]

104. Ծաղիկ, ազգային, քաղաքական եւ գրական շաբաթաթերթ: Գ—Դ Տարի: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. հրտ. Յ. Գ. Փալազաշեան. 50 ղշ.:

105. Կազմակերպ Կանոնագիր Ազգ. Եկեղ. Վարչութեան: Կ.Պ. տպ. Ճ. Արամեան. 4° էջ 23. 3 ղշ.:

106. Կաղանդ կամ Նուէր Մանկանց, խրատներ երգերու, հրտ. Տ. Գ. Փափազեան: Կ.Պ. տպ. Ճիվէլէկեան. 60 փարայ:

digitised by A.R.A.R.@

107. Կոստանեանց Ս. — Ցուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիզի Ներսէսեան Հոգեւոր Դպրանոցի: Տփ. Շարաձէ. 4° Է եւ 75 էջ:

[Քննդտ. — “Հանդէս Ամս.„ 1894, Թ. 4: “Մուրճ„ Թ. 11: “Արձագանք„ 1894, Թ. 68: Fr. Müller ի WZKM, VIII, 86 ff.]

108. Կիրք որ կոչի Կիպրիանոս, վասն ամենայն ազգ պատահարաց: Կ.Պ. տպ. Յ. Ասատուր. 32° 155 էջ (պատկերազարդ:)

109. Կոնիբիր Փ. Կ. — Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ Թարգմանութեանց Արիստոտէլի. Թրգմ. Հ. Յ. Տ. Յաւելուած՝ Արիստոտէլի Յաղագս Աստուծոյ: Վիեննա, տպ. Մխիթ. 8° Է եւ 98 էջ. Ֆր. 1.25. (Ազգ. Մատ. Ժ:)

110. Կովիդակայ — Կազիա, Թրգմ. Օր. Մինբունհի: Տփ. տպ. Արօր. 10 կ.:

111. Կրպէ. — Պատկերներ կեանքից (“Մեղու„ եւ “Նոր-Դար„ լրագիրներէ:) Աղեքսանդրոպոլ, տպ. Գ. Սանոյեան, 8° 85 էջ. 20 կ.:

[Քննդտ. — “Տարազ„ Թ. 28:]

112. Հաճի պէյ զատէ Մուխթար — Տաճկերէն գիտցողին 4 օրուան մէջ հայերէն կարդալու հնարքը (տճկ.) Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 12° 14 էջ. 2 ղշ.:

113. Համառօտութիւն տարեկան հաշուոյ Ամենափրկչեան Ս. Վանուց եւ տպարանի եւ ազգային կենդրոնական եւ Կատարինեան ուսումնարանաց եւն Նոր-Ջուղայի վասն 1892 ամին: Նոր-Ջուղա (՞)

114. Հայրենիք, օրաթերթ քաղաքական եւ ազգային: ԻԾ Տարի: Կ.Պ. տպ. “Հայրենիքի„ Խմբ. Արփիարեան. 25 Ֆր.:

115. Հանդէս Ամսօրեայ, բարոյական, ուսումնական եւ արուեստագիտական: Է Տարի: Վիեննա, տպ. Մխիթ. Ի° 384 էջ. 6 տախտակ, եւ պատկերներով. 10 Ֆր.:

116. Ղազարեանց Յ. — Խուն-խոր, Տաճկահայերի կեանքից: Տփ. տպ. Մ. Վարդ. 60 կ. (Հրտ. Ընկ.):

117. Ճաղարբեկեան Յ. — Վեհափառ Հայրիկը. (“Նոր-Դար„ թերթէն:) Տփ. 10 կ.:

118. Ճերիտէյի Շարգիյէ (հայատառ տաճկաբարբառ) լրագիր: Ժ Տարի: Կ.Պ. տպ. եւ խմբ. Տ. Միվէլէկեան. 150 ղշ.:

119. Ճոհնսթըն Տ. Վ. — Մանր ուսմունք երկրագործական Տարրաբանութեան, Թրգմ. Կ. Վահան: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 1892—1893 8° 152. էջ. 4 ղշ.:

120. Մալաթեան Գ. Ա. — Կենդանական բնախօսութիւն (Մարդակազմութիւն) պատկերազարդ. Հրտ. Ս. Փէրամէճեան: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° 84 էջ. 4 ղշ.:

121. — — Պատկերազարդ առողջաբանութիւն: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° Ը եւ 110. 4 ղշ.:

122. Մամիկոնեան Վ. քհ. — Երգք հոգեւորք հաւաքեալ յեկեղեցական գրոց: Բ Տպ.: Վաղարշապատ, տպ. Էջմ.:

123. Մամուրեան Մ. — Ընթերցարան: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° 160 էջ. 2.20 ղշ.:

124. Մայր ցուցակ — Մատենից գրադարանի Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի: Տփ.:

125. Մանր տետրներ — 1. Կաղ Թովմաս կամ Գիտնալը սիրել է եւ սիրելը՝ ընել. 2. Նոյի հիւսները. 4. Միայն ժամանակ ժամանակ. 4. Մանկանց առաջին վարժապետները. 5. Յիսուսի նայինք: Կ.Պոլ. տպ. Պօյաճեան: 16° Երես՝ 16+8+19+21+13:

126. Մառ Ն. — Պիտանի ընթերցուածք նախնի հայերէն ընդ որում Բառարան հայ-ռուսերէն, ի պէտս նորավարժից. Պետր. տպ. Լիբերման. 8° 172 էջ:

[Քննդտ. — “Հանդէս Ամս.„ Թ. 11: “Արարատ„ Թ. 6: Տես նաեւ ի կարգի Եւրոպ. հրատարակութեանց:]

127. Մասիս, երկշաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական: ԽԲ Տարի: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ.: Խմբ. Զօհրապ. 40 ղշ.:

128. Մատթէոս Յ. — Խորհուրդք հաւատացելոց: Բ Տպ. Կ.Պ. 8° 400 էջ. 12 ղշ.:

[Քննդտ. — “Բիւրակն„ Թ. 211, 213:]

129. Մատինեան Գ. քհ. — Համասփիւռ, հեքիաթ. (“Աղբիւր„ թերթէն:) Տփ. տպ. Մ. Վարդ. 5 կ.:

130. Մարգարեան Գ. — Պատկերազարդ համառօտ աշխարհագրութիւն բնական, ուսումնական եւ քաղաքական: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° 144 էջ. 2.20 ղշ.:

131. — Վ. — Գեղեցիկ գրօսարան տաճկախօս տղայոց համար, պատկերազարդ: Զ Տպ.: (Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 8° 96 էջ. 2 ղշ.:

132. — — Հարպիկ կամ Նոր քերական պատկերազարդ: Կ.Պ. տպ. Սերվիչէն. 8° 32 էջ. 10 փարայ:

133. Մէճմուայը ախպար հայատառ տաճկաբարբառ լրագիր ամենօրեայ: Թ Տարի: Կ.Պ. 120 ղշ.:

134. Միաբան — Ուրարտեան բեւեռագրերի լեզուն: (“Արարատ„ թերթէն:) Վաղարշապատ, տպ. Էջմ. 8° 16 էջ:

[Քննդտ. — “Մուրճ„ Թ. 12:]

135. — — “Նստոց„, դիտողութիւն ուսուցչապետ Ն. Մառի մէկ արձանագրութեան առթիւ: Հինգ արձանագրութիւնք: Վաղարշապատ, տպ. Էջմ. 8° 12 էջ. (“Արարատ„ թերթէ:)

136. Միլըճըլը Ճ. — Հանգստեան օրը: Կ.Պ. տպ. Պօյաճեան (1894՞) 12° 44 էջ:

137. Մինասեան Մ. — Ծաղիկներ անգղիական գրականութեան: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 100 էջ. 4 ղշ.:

138. — Մ. Գ. — Բառարան երեքլեզուեան անգղ.-հայ եւ թուրք, հրտ. Գ. Գայըգճեան: Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 8° 1064 էջ. 50 ղշ.:

139. Միսքճեան Տ. Յովհ. Վ. — Առձեռն բառգիրք լատիներէն-հայերէն ի պէտս դպրոցաց: Հռոմ՝ տպ. Ս. Ժող. Տրծ. Հւտ. 8° ԺԶ եւ 1114 էջ. 30 Ֆր.

140. Միսիոնարք ամերիկեան (հրատարակութիւնք 92 (1893 տարւոյ). հմմտ. Զարդարեան, Գրացուցակ 1893, էջ 35.) — 1. Մեկնութիւն նորոյ կտակարանի: Հտր. Ա—Գ: Կ.Պ. տպ. Պօյաճեան. 60 եւ 70 ղշ.: — 2. Թիփ Լէվի եւ իւր ճրագը: Կ.Պ. տպ. Պօյաճեան. 223 էջ. 4 եւ 6 ղշ.: (Նաեւ հայատառ տաճկ.:) — 3. Պատմութիւն Յիսուսի Քրիստոսի ըստ աւետարանաց: Կ.Պ. տպ. Պօյ. 196 էջ. 1½ եւ 2 ղշ.: (Նաեւ հայատառ տաճկ.:)

141. Միրիմանեան Բ. — “Հայրիկին„: Տփ. 10 կ.:

[Քննդտ. — “Տարազ„ Թ. 33:]

142. Մխիթարեան եպ. Խ. — Սկզբունք նիւթական իմաստասիրաց եւ քրիստոնեայ աստուածաբանից: Կ.Պ. (1893՞) 131 էջ. 5 ղշ.:

143. Մկրտումեան Գ. քհ. — Ղայթմազեանց Միքէլը, պատմուածք Ղազի-Մուլլի արշաւանքներից: Մոսկուա, տպ. Բարխ. 8 կ.:

144. Մկրտչեան Լ. — Ամուսնական խնդիրներ Մասն Ա. Ծնողք եւ Զաւակունք: Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 8° 16 էջ. 50 փարայ:

145. — — Նոյն: Մասն Բ. Ծախու ապրանք: Կ.Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 8° 22 էջ. 50 փարայ:

[Քննդտ. — “Արեւելք„ Թ. 2720: “Մուրճ„ 1894 Թ. 4:]

digitised by A.R.A.R.@

146. Մշակ, գրական եւ քաղաքական լրագիր: ԻԱ Տարի: Խմբ. Քալանթարեան. 10 րբլ. (ընդհատեալ քանի մ'ամիս:)

147. Մոլխոյբարիձէ Ա. — Նլզուշա, վէպ. թրգմ. վրացերէնից Տ. Փիրումեանց: Տփ. տպ. Վրաց Ընկ. 8° 176 էջ. 45 կ. (Հրտ. Ընկ.:)

[Քննդտ. — "Մուրճ" Թ. 9:]

148. Մուրճ, քաղաքական, հասարակական-գրական ամսագիր: Ե Տարի: Տփ. տպ. Ռոտ. 10 րբլ.:

149. Յ. Կ. Ա. եւ Մ. Յ. — Առաջնորդ գրուցատրութեան անգղ. լեզուի: Կ.Պ. 8° 80 էջ. 5 ղշ.:

150. Յակոբեան Յ. Վ. — Բառարան անգղ.-հայ ըստ Ուէպստրի եւ Ուստըրի: Կ.Պ. (թերթք 20—40:) բժնորդգին 30 ղշ.:

151. Յարութիւնեանց Ի. — Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնն եւ հայ ուսանողները: Տփ. տպ. Շարաձէ.: 12° 120 էջ. 40 կ.:

[Քննդտ. — "Արձագանք" Թ. 139:]

152. Յովհաննիսեան Ա. — Բառգիրք ռուսերէնից հայերէն: Հտր. Բ: Տփ. տպ. Յ. Մարտ. 4 րբլ. (Ա եւ Բ Հտր. 7 րբլ.:)

153. — Ի. — Յաւելուած "Եղիշէի Պատմութիւն Վարդանայ ըստ Անձեւացեաց օրինակի" գրքին (տպ. Մոսկ. 1892) հայ-ռուս բառագրքին: Մոսկ. տպ. Բարխ. 8° 38 էջ.:

154. — Մ — Իրական կեանքի նուագներ: Բ Տպ.: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 12° 58 էջ. 2 պատկեր. 2 ղշ.:

155. Յովսէփեան արկ. Գ. — Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից: Տփ. 50 կ. (Հրտ. Ընկ.)

[Քննդտ. — "Արարատ" Թ. 5: "Նոր-Դար" Թ. 7, 8, 9:]

156. Նազարեանց Շմ. քհ. — Օրացոյց 1894 թուին: Է Տարի: Տփ. տպ. Յ. Մարտ. 20 կ.:

157. Նարեկացի — Ողբերգութիւնք: Գ Տպ.: Վեննա. տպ. Մ. Ղազ. 24° էջ:

158. Նաւասարդեան Տ. — Հայ ժողովրդական հէքիաթներ: Գիրք Ը: Տփ. տպ. Վարդ. 50 կ.:

[Քննդտ. — "Արձագանք" Թ. 140: "Տարազ" 1894, Թ. 10:]

159. Ներշապուհ Գ. — Գարնան շողեր, աշնան ցօղեր: Կ.Պ. 8° 96 էջ. 5 ղշ.:

160. Նշմարք եւ նշխարք Հայոց Մեծաց, Վիմեբանգ փորագրութեամբք: Հտր. Ա—Գ: Նոր Տպգր.: Վեննա. տպ. Մ. Ղազար, Ֆր. 14:

161. Նոր-Դար, ամենօրեայ թերթ քաղաքական եւ գրական: Ժ Տարի: Տփ. խմբ. Ս. Սպանդարեան. 10 րբլ.:

162. Շաբաթաթերթ ծանուցմանց, առեւտրական եւ արուեստական, չորս լեզուաւ. արտօնատէր Մ. Պէկեան, խմբ. Յ. Նազըճեան: Կ. Պ. տպ. Մինասեան եղբարք, բաժանորդագին 40 ղշ. (ի Կ.Պ 27 ղշ.:)

163. Շահազիզեան Ս. — Յոբելեանի տարեդարձը: Մոսկ. տպ. Բարխ. 8° 76 էջ. 1 րբլ. 50 կ.:

[Քննդտ. — "Արարատ" Թ. 5:]

164. Շանթ — Լերան աղջիկը, քերթուած ("Տարազ" թերթէն.) հրտ. Գ. Միրզոյեան եւ Ս. Լիսիցեան: Տփ. տպ. Վրաց Ընկ. 8° 32 էջ. 10 կ.:

[Քննդտ. — "Հայրենիք" Թ. 483:]

165. Չիչմանեան Ն. Մ. — Քերականութիւն հրահանգիչ գրաբար լեզուի: Կ.Պ. գրատ. Պալենց:

166. — — Նոր քերականութիւն գաղղ. լեզուի ըստ Բոատըվէնի: Կ.Պ. գրատ. Պալենց. 5 ղշ.:

167. — արքեպ. Ղ. — Կոնդակ օրհնութեան խրատական: Կ.Պ. տպ. Սերվիչէն. մեծ 8° 24 էջ:

168. Չիրվանզադէ — Արսէն Դիմաքսեան, վէպ ("Մուրճ" թերթէն:) Տփ. տպ. Ռոտ. 8° 420 էջ. 1 րբլ. 50 կ.:

[Քննդտ. — "Տարազ" Թ. 38, 39, 40, 41, 42: "Հայրենիք" Թ. 559:]

169. Որբերեան Ռ. — Յիշատակաց ծաղիկներ, ոտանաւոր եւ արձակ գրուածք: Կ.Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° 78 էջ. 5 ղշ.:

[Քննդտ. — "Հայրենիք" Թ. 567, 568: "Արեւելք" Թ. 2885:]

170. Ջամանեան Հ. Հ. Վ. — Բարոյական ընթերցուածներ: Բ Տպ.: Վիեննա, տպ. Մխիթ. 12° 240 էջ. Ֆր. 1:

171. Ջարչարանքի շաբաթը: Վաղարշապատ, տպ. Էջմ. (1893—94) 80 էջ. 6 պատկեր: 15 կ.:

172. Ջմշկեան Մ. — Ծոցի Օրացոյց 1894 թուի: Տփ. 1 պատկեր. 15 կ.:

173. Ջօլազեան Տ. — Առաջնորդ խօսակցութեան յունարէն լեզուի, յուն.-հայ-թուրք. Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° 127 էջ. 6 ղշ.:

174. — — եւ Սոփրենեան — Օրինագիրք Ամուսնութեան կամ ընտանեկան իրաւունք: Ա. Ամուսնական Օրէնք յոյն եկեղեցւոյ: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 8° Ծ եւ 159 էջ:

[Քննդտ. — "Ծաղիկ" Թ. 13: "Ճ. Շարգ." Թ. 2371 եւ 2392:]

175. Պալեան Տ. Վ. — Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա: Հտր. Ա. Տետր Բ: Ցուցակ Ձեռագրաց Ս. Աստուածածին եկեղեցւոյ Գըրշէհիրի: Կ.Պ. տպ. Գ. Պաղտ. 4° էջ 45—76. 7 ղշ.:

[Քննդտ. — "Հանդէս Ամս." Թ. 9:]

176. — — Սուրբ երկիր, Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի եւ սրբազան տեղեաց: Հ. Ա: Կ.Պոլ. տպ. Ն. Կ. Պէր. 8° 364:

177. Պաղտատլեան գրատուն — Ցուցակ գրոց եւ ծանօթութիւնք: Կ.Պ. տպ. Պաղտ. 12° 30 էջ:

178. Պատկեր, հանդէս կիսամսեայ: Դ Տարի Կ.Պ. տպ. Ճիվէլէկեան. 40 ղշ.:

179. Պատի Օրացոյց Հայկական ըստ արեւելեան Տոմարի (հրտ. Հ. Գ. Վ. Գալէմքեարեան) 1894 տարւոյ: Վիեննա, տպ. Մխիթ. մեծութիւն 65×52, շքեղ տպուած 16 գունով. 2 Ֆր.:

180. Պատկանեան Ռ. — Ընտիր երկասիրութիւնք, խմբ. Գր. Խալաթեան, հրտ. Վառվառէ Ն. Քանանեան: Հտր. Ա եւ Բ: Պետր. տպ. Լիբերման. 8° Լ եւ 450+477 էջ. 4 րբլ.:

(Մնացեալը գալ անգամ.)

## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐՐՈՐԴ ԱՆՎԱՒԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

### Ե.

*Կորնթացւոց Գ թղթին գործածութիւնն սուրբ եկեղեցւոյն մէջ:*

Սուրբ եկեղեցւոյն մէջ կեղծ թուղթս կերպապէս կանոնական արժէք ստացած է։ Եւ այս անժխտելի կերպով կը հետեւի այն պարագայէն որ Դ դարուն Ս. Եփրեմ այս անվաւեր գրութիւնն կորնթացւոց երկու կանոնական թղթոց հետ ի

digitised by A.R.A.R.@